

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՐԻ
ՄԻԱՎՈՐՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ (1921 թ. ապրիլ— 1922 թ. մարտ)

Է. ԶՈՂՐԱՅԱՆ

1921 թ. գարնանը, երբ Վրաստանում ևս հաստատվեց սովետական իշխանություն, իսկ Հայաստանում ճնշվեց դաշնակցական խռովությունը, անդրկովկասյան երեք հանրապետությունների՝ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեյջանի տնտեսական և քաղաքական միավորումն առաջին պլանի վրա մղվեց։ Սովետական հանրապետությունների ֆեդերատիվ միություն ստեղծելու հարցը առաջ էր քաշվել դեռևս 1921 թ. մարտին գումարված կուսակցության X համագումարում։ «Առանձին սովետական հանրապետությունների մեկուսացած գոյությունը անկայուն, անհաստատ է կապիտալիստական պետությունների կողմից նրանց գոյության դեմ եղած սպանալիքի հետևանքով»,— ասված է ազգային հարցի մասին համագումարի ընդունած բանաձևում։ «Սովետական հանրապետությունների պաշտպանության ընդհանուր շահերը մի կողմից, պատերազմի քայքայած արտադրողական ուժերի վերականգնման խնդիրը մյուս կողմից և սովետական հաջողատու հանրապետությունների կողմից սակավահասց հանրապետություններից ցույց տրվելիք անհրաժեշտ պարենային օգնությունը երրորդ կողմից»,— հրամայաբար թելադրում են առանձին սովետական հանրապետություններից կազմել պետական միություն, որպես իմպերիալիստական ստրկացումից ու ազգային ճնշումից փրկելու միակ ուղի»¹։ Իսկ արդեն 1921 թ. ապրիլին Վ. Ի. Լենինը որոշակիորեն դրեց անդրկովկասյան հանրապետությունների տնտեսական միավորման հարցը։ «Այժմ էլ Վրաստանը դարձավ սովետական»,— ասել է Վ. Ի. Լենինը ՀԱՄԿԵ կոմունիստական ֆրակցիայի նիստում։— Խոսքը կովկասյան հանրապետությունների՝ վրացական, ադրբեյջանական և հայկական մեկ տնտեսական կենտրոնի մեջ միավորելու մասին է...»²։ Ըստ որում, հանրապետությունների միավորումը պետք էր սկսել նախ և առաջ երկաթուղիների և արտաքին առևտրի միավորումից։

Երկաթուղին, որն այդ ժամանակ երեք հանրապետությունները միմյանց հետ կապող միակ տրանսպորտն էր, գտնվում էր շափազանց անմխիթար վիճակում։ Երթևեկությունը կանոնավոր չէր, հաճախ գնացքները կանգ էին առնում՝ վառելիք չլինելու կամ էլ անսարքության պատճառով։ Նման վիճակը հրամայողաբար պահանջում էր կտրուկ միջոցներ ձեռք առնել Անդրկովկասում երկաթուղային ցանցը կարգի գցելու համար, մի բան, որ միայն միավորված երկաթուղային ցանցի դեպքում էր հնարավոր։ ՀՍՄՀ արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատի 1921 թ. հուլիսի 5-ի բյուլետենում (№ 2), որտեղ խոսվում է Հայաստանի կոմունիստական կուսակցության արտաքին տնտեսական քաղաքականության մասին, երկաթուղիների միավորման հարցի կապակցությամբ ասված է. «Առաջինը այդ քաղաքականության արդյունքին, կովկասյան երեք հանրապետությունների համաձայնությամբ Անդրկովկասի երկաթուղացանցի միացումն էր մինչև Պետրովսկ, որն այժմ ի կատար հանված իրողություն մըն է։ Այս կարգադրությամբ ոչ միայն մեր երկրի քանդված երկաթուղագծերը կկանոնավորվեն և Անդրկովկասում կստեղծվի հազորակցության կանոնավոր ապարատ, այլ կարբազրվի այն մեծ անկարգությունը, որ Անդրկովկասը երեք հանրապետությունների բաժանվելիք վերջ առաջ եկավ, լինելով անհամապատասխան բաշխում, ավելի ճիշտ կողոպուտ Անդրկովկասի երկաթուղագծի հարստության։ Վրաստանը իրեն սեփականացուցած էր լավագույն և խոշորագույն պատառը, իրեն պատկանեցնելով վագոնների և շոգեմեքենաների մեծագույն մասի հետ նաև Քիֆլիսի մեծ երկաթուղային արհեստա-

¹ ՀՍՄԿ-Կ-Կ համագումարների, կոնֆերանսների և կենտկոմի պլենումների բանաձևերում և որոշումներում, մաս 1, Եր., 1954, էջ 711։

² В. И. Ленин, ПСС, т. 43, с. 186—187.

նոցը, որ վերաբերում էր համայն կովկասյան երկաթուղագծին: Աղբրեջանը նվազ չէ մնացած, իսկ Հայաստանը ժառանգած էր շատ չնչին մասը ընդհանուր բաժնից»³:

Բյուլետենում խոսվում է նաև երկաթուղային ցանցի միավորման առաջին կոնկրետ արդյունքների մասին. «Այժմ ձեռնարկված է Ալեքսանդրապոլ—Երևան գծի վերանորոգության, որ դաշնակցականների և Թուրքերի իշխանության ժամանակ փշացել էր, նույնպես վերաբացվում է Ալեքսանդրապոլի երկաթուղային արհեստանոցը, մի բան— որ չէր կարելի անել մեր սեփական միջոցներով: Հաստատված է կանոնավոր երթևեկ Երևան—Քիֆլիս—Բաքու և Երևան—Զուլֆա—Քավրիզ գծի վրա»⁴: Բյուլետենում այնուհետև նշվում է, որ «մայիսի 13-ին կայացած համաձայնությունը Աղբրեջանի, Վրաստանի և Հայաստանի սահմանների միջև գտնվող մարտատեղերը և պարենարգել խմբերը վերացված են: Տնտեսական սահմաններու վերացումը, երկաթուղագծի միացման հետ պիտի ըլլային այն երկու անհրաժեշտ ֆակտորները, որոնք Անդրկովկասի տրեստեսական բարդ կյանքի մեջ պիտի հաստատեն տնտեսական կանոնավոր ապարատ: Այս երկու ակտերը՝ Անդրկովկասյան երկրներում ընդհանրապես և Հայաստանում մասնավորապես կյանք ու կենդանություն ներշնչեցին և առաջացուցին ներդաշնակություն»⁵: Երեք երկրների տնտեսական կյանքի մեջ...»⁵:

Ինչ վերաբերում է արտաքին առևտրին, ապա այստեղ միավորման նպատակահարմարությունը բխում էր նախ և առաջ արտաքին շուկայում մրցակցությունը վերացնելու (մի բան, որ խիստ նկատվում էր) և վալյուտային ֆոնդերը միավորելու անհրաժեշտությունից:

Վ. Ի. Լենինը, որ ուշի-ուշով հետևում էր Անդրկովկասի տնտեսական միավորմանը և ուղղություն տալիս դրան, մեծ ուշադրություն էր դարձնում հատկապես արտաքին առևտրի միավորմանը: Այդ է վկայում այն հեռագիրը, որ ապրիլի 17-ին նա ուղարկել է Գ. Օրշոնիկիձին: «ՄՊՎ է ձեռք մոտ տնօրինում արտառևտուրը,— ասված է այդ հեռագրում,— միավորված են արդյոք այդ իմաստով Վրաստանը, Հայաստանը, Աղբրեջանը...»⁶:

Կովկասյան բուլլետենները Գ. Օրշոնիկիձին գլխավորությամբ լայն աշխատանք ծավալեցին Լենինյան ցուցումները կյանքում իրագործելու համար և արդեն ապրիլի 26-ին այդ նպատակով Քիֆլիսում երեք հանրապետությունների ներկայացուցիչներին մասնակցությամբ (Հայաստանը ներկայացնում էր Գ. Շահվերդյանը) հրավիրվեց խորհրդակցության, որը հավանություն տվեց արտաքին առևտրի միավորմանը: Սակայն հարկավոր էր այդ միավորմանը կոնկրետ ձև տալ և պայմանագրով ամրապնդել: ՌԿ(Բ)Կ Կենտկոմի կովկասյան բյուրոյի Բաքվում գումարված պլենումի 1921 թ. հունիսի 1-ի նիստը լսելով «Վրաստանի, Հայաստանի և Աղբրեջանի մասին» հարցը, որոշեց «պայմանագրի նախագիծը (ներկայացված Ռարինովիչի կողմից) քննարկման և վերջնական խմբագրման հանձնել ընկ. ընկ. Ալիևից, Մյասնիկովից, Սերեբրովսկուց և Ռարինովիչից կազմված հանձնաժողովին և մտցնել պլենումի երկկույան նիստ՝ վերջնական հաստատման համար»⁷: Ստեփան երեկոյան նիստում այդ հարցը չի քննվում՝ հավանաբար պատրաստ չլինելու պատճառով: Այն լավում է հունիսի 2-ի նիստում, որտեղ քննության առնելով «Աղբրեջանի, Վրաստանի և Հայաստանի միացյալ արտառևտրի մասին պայմանագրի նախագիծը (Ռարինովիչի հանձնաժողովի ղեկավարում)»⁸, որոշվում է հաստատել այն: Նույն օրն էլ Բաքվում երեք հանրապետությունների կառավարությունների ղեկավարները՝ Ց. Մախարաձեն, Ա. Մյասնիկյանը և Ն. Նարինանովը համաձայնագիր ստորագրեցին արտաքին առևտրի միացյալ մարմին ստեղծելու մասին: ՀՍՍՀ արտագործողկոմատի ինֆորմացիոն բաժնի բյուլետենում ասված է. «Որպեսզի բոլոր արտաքին շուկաներում նպատակահարմար կազմակերպվի ապրանքների փոխանակումը և ռեալիզացիայի ենթարկվեն արտահանության բոլոր աղբյուրները, Վրաստանի, Աղբրեջանի և Հայաստանի սոցիալիստական հանրապետությունները հաստատեցին արտաքին առևտրի համար միավորված մի մարմին, որը կազմում է Վրաստանի, Աղբրեջանի և Հայաստանի միություն՝ արտաքին առևտրի համար»: Միություն կենտրոնն է Քիֆլիսը: Միության բոլոր գործերը ղեկավարելու և կառավարելու համար պայմանավորվող հանրապետությունների հաստիկ որոշումով ընտրվում է միասնական վարչություն:

Պայմանավորվող հանրապետությունների միջև բոլոր փոխհարաբերությունները արտաքին առևտրի հարցերի վերաբերյալ, որոնք են՝ արտահանություն, ներմուծում, վալյուտային ֆոնդ և այլն, պիտի որոշվեն հատուկ պայմանագրերով:

³ ՄԼԻ ՀՄԱ, ֆ. 1, ց. 1, գ. 178, փ. 7, թ. 8:

⁴ Նույն տեղում:

⁵ Նույն տեղում, էջ 8—9:

⁶ В. И. Ленин, ПСС, т. 52, с. 150.

⁷ ՄԼԻ ԿԿԱ, ֆ. 64, ց. 2, գ. 1, թ. 61:

⁸ Նույն տեղում, թ. 64:

Պայմանագիրը ստորագրված է 2 հունիսին 1921 թ. Բազմա մեջ Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի կառավարությանց նախագահների կողմից:

Այժմ մշակվում է Քիֆլիսում սույն պայմանագրի մանրամասնությունները երեք հանրապետությունների ներկայացուցիչների կողմից: Խորհրդային Հայաստանի կողմից լիազոր է պարենավորման և արտաքին առևտրի կոմիսար Ալեքսանդր Բեզդադյանը՝

Խորհրդային Հայաստանն թերթը 1921 թ. հուլիսի 6-ին հրատարակեց արտաքին առևտրի վերաբերյալ երեք հանրապետությունների միջև կնքված պայմանագրի տեքստը, որը և ներկայացնում ենք ամբողջությամբ. 1. Խորհրդային սոցիալիստական հանրապետությունները՝ Վրաստան, Ադրբեջան և Հայաստան, իրենց արտածելի ֆոնդերը արտասահմանյան բոլոր շուկաներում ունակացիայի ենթարկելու համար հիմնում են արտաքին առևտրի մարմին, որն անվանվում է Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի դաշինք արտաքին առևտրի համար և զետեղվում է Քիֆլիսում:

2. Արտաքին առևտրի միացյալ մարմնին վերապահվում է՝

ա) Դաշինք կնքող հանրապետությունների արտածելի ֆոնդ կազմող արտածելի բոլոր ապրանքների արտասահմանյան շուկայում վաճառելու բացառիկ իրավունքը:

բ) Դաշինք կնքող հանրապետությունների առանց բացառության բոլոր ձեռնարկությունների և հիմնարկությունների համար գնումներ կատարելու բացառիկ իրավունքը:

3. Արտաքին առևտրի միացյալ մարմինն ունի մի վալյուտային ֆոնդ և նրան վերապահված է դաշինք կնքող հանրապետությունների կարիքների համար արտասահմանյան վալյուտա գնելու բացառիկ իրավունքը:

4. Դաշինք կնքող ամեն մի հանրապետություն արտածելի ֆոնդերից կազմվում է մի միացյալ ֆոնդ, իսկ արտասահմանում գնված ապրանքները բաշխվում են այս դաշինքի 8 և 9 կետերին համաձայն:

5. Միութայն բոլոր գործերը ղեկավարելու և կառավարելու համար նշանակվում է դաշնագրող երեք հանրապետությունների ներկայացուցիչների հատուկ որոշմամբ մի ղեկավարող մարմին:

6. Ժամանակավորապես, մինչև անդրկովկասյան հանրապետությունների գերագույն տրեստեական խորհրդի կազմակերպելը, ապրանքների ներմուծումը կատարվում է դաշնագրող հանրապետությունների արտաքին առևտրի ժողովրդական կոմիսարիատների ներկայացրած պահանջներին համաձայն, որոնք համաձայնեցվում են արտաքին առևտրի միացյալ մարմնով:

7. Դաշնագրող հանրապետությունների տերիտորիաների վրա գտնվող անդրկովկասյան երկաթուղիների միացյալ վարչությունը և Ադրբեջանը արտաքին առևտրի միացյալ մարմնին իրավունք ունեն ներկայացնելու անմիջական պահանջագրեր՝ դաշնագրող հանրապետությունների ներմուծման ծրագրերի մեջ մտցնելու համար, ըստ որում նավթային արդյունաբերության պահանջը բավարարվում է առաջին հերթին:

8. Մեծ գործածություն ունեցող առարկաների և պարենի գնումների ժամանակ այդպիսիք բաշխվում են դաշնագրող հանրապետությունների միջև՝ նրանց ներկայացրած և հաստատած պահանջագրերին համաձայն:

9. Տեխնիկական կառուցման առարկաների և արդյունաբերական միջոցների գնումները կատարվում և բաշխվում են ձեռնարկությունների որ աստիճանի հարվածային լինելու հանգամանքին համեմատ:

10. Դաշնագրող հանրապետությունների արտաքին առևտրի ժողովրդական կոմիսարիատները պետք է՝

ա) ճշտորեն պարզեն այդ հանրապետությունների արտածելի ֆոնդը, որի կոնտինգենտորվական, ստանդարտիզացիան, պահպանումը և փոխադրումը պիտի կատարեն արտաքին առևտրի միացյալ մարմնի պայմանների համաձայն:

բ) դաշնագրող հանրապետությունների ներմուծման ընդհանուր ծրագրի կազմելու համար, ճշտորեն պարզեն իրենց ձեռնարկությունների և հիմնարկությունների կարծիքները:

գ) արտաքին առևտրի միացյալ մարմնի արտածելի ֆոնդը հանձնեն և ներմուծվածը ընդունեն:

11. Որչափ որ արտաքին առևտրի միացյալ մարմինը ներկայացուցիչներ ունի օտար պետություններում, այդ ներկայացուցիչները դաշնագրող ամեն մի հանրապետության կողմից օժտվում են մանդատով:

Սակայն հանրապետություններում դեռևս գործում էին արտաքին առևտրի ազգային հաս-

տատութիւնները, և այդ հանգամանքը աշխատանքների մեջ զուգահեռութիւն, իսկ հաճախ նաև խառնաշփոթութիւն էր առաջացնում: Ահա թե ինչու ՌԿ(Բ)Կ Կենտկոմի կողմայան բյուրոն 1921 թ. սեպտեմբերի 4-ի նիստում լսելով այդ մասին Ալեքսանդր Բեգզադյանի զեկուցումը, որոշեց.

«ա. Ազգային արտառևտրերը վերացնել:

բ. Արձակված ազգային արտառևտրերի ապարատները հանձնել միացյալ արտառևտրի ապարատին՝ այն ուժեղացնելու համար:

գ. Միացյալ արտառևտուրը իր գործողութիւնները կողմայան հանրապետութիւնների սահմաններում վարում է համապատասխան ժողովխորհրդների (հեղկոմների) միջոցով:

դ. Անդրկովկասյան հանրապետութիւնների սահմաններում ամբողջ մաքսային քաղաքականութիւնը ղեկավարում է միացյալ արտառևտուրը՝ համապատասխան ժողովխորհրդների միջոցով:

ե. Մաքսատների կառավարման օրգանները և եկամուտները մնում են համապատասխան հանրապետութիւնների իրավասութիւն տակ»¹⁰: Այս որոշմանը կցված էր նաև ժանդարմութիւն, որի մեջ ասված էր, որ ազգային արտառևտրերի վերացումը պետք է ավարտել 7-օրյա ժամկետում: Բայց, շնայած դրան, արտաքին առևտրի ազգային հաստատութիւնները վերացվեցին հոկտեմբերի սկզբին: Պետք է ասել, որ 1921 թ. աշնանը Միացյալ արտառևտրի գործունեութիւնը դեռևս ամբողջովին կարգավորված չէր և հաճախ դժվարութիւններ էին ծագում կապված այն բանի հետ, որ հանրապետութիւնները իրենց հումքը և ֆոնդերը երբեմն դժկամութիւնք էին տրամադրում նրան: Ահա թե ինչ էր ասել այդ մասին Միացյալ արտառևտրի կոլեգիայի անդամ. «2002 արտաքին առևտրի և պարենավորման ժողկոմ Ալեքսանդր Բեգզադյանը հոկտեմբերի 26-ին Քիֆիսում Հայկական հեռագրական գործակալութիւն թղթակցի հետ ունեցած զրույցի ժամանակ. «Միացյալ արտառևտուրը մինչև այժմ աշխատել է բացառապես ռուսական սկզբ, քանի որ հանրապետութիւնների բոլոր վայրտային ֆոնդերը, շնայած կոլեգիայի բազմիցս արած առաջարկներին, ոչ միայն չեն դրված Միացյալ արտառևտրի տնօրինութիւն տակ՝ համաձայն անդրկովկասյան հանրապետութիւնների առևտրական միութեան մասին պայմանագրի, ըստ որի այդ հանրապետութիւնների բոլոր ֆոնդերը պետք է կազմեն Միացյալ արտառևտրի սեփականութիւնը, այլ նույնիսկ նկատի չեն առնված հանրապետութիւններում, իսկ արտահանվող ապրանքների հետագա մթերումը, ըստ երևույթին, նրանց տնտեսական ժողկոմատների ուժերից վեր է»¹¹:

1921 թ. հոկտեմբերի 26-ին Քիֆիսում գումարվեց անդրկովկասյան հանրապետութիւնների մաքսային խորհրդակցութիւն, որը հրապարակել էր միացյալ արտառևտրի նախաձեռնութիւնք: Խորհրդակցութիւնը մասնակցում էին միացյալ արտառևտրի կոլեգիայի նախագահ Ռաբինովիչը, անդամներ Կոլոմիցյեն ու Մեդիլին, Անդրկովկասում ՌՍՖՍՀ արտաքին առևտրի ժողկոմատի ներկայացուցիչ Բրեսլավը, Վրացական ՍՍՀ ֆինժողկոմատի ներկայացուցիչներ Ալիբաբայան և Միքաձեն, Ադրբեյջանական ՍՍՀ-ից՝ Հաջիևը, Գոլովինը և Լեբեդևը, շՍՍՀ-ից՝ Ա. Բեգզադյանը և Աբրահամյանը, ՌՍՖՍՀ Ցենտրոսոյուզից՝ Դյադկինը, ինչպես նաև հրապարակված մասնագետներ և այլ անձինք¹²:

Բանն այն է, որ արտաքին շուկայում անդրկովկասյան հանրապետութիւնների միասնական առևտուրը իր հետ բերել էր նաև մի շարք նոր պրոբլեմներ, որոնք անհետաձգելի լուծում էին պահանջում: Դա նախ և առաջ վերաբերում էր անդրկովկասյան հանրապետութիւնների կայուն և հստակ մաքսային քաղաքականութեան մշակմանը՝ ինչպես արևմտաեվրոպական, այնպես էլ թուրքական և իրանական շուկաների հետ հարաբերութիւնների համար: Դրա հետ մեկտեղ, անհրաժեշտ էր նաև մաքսային կայուն հարկեր սահմանել և պարզել ցուցակն այն ապրանքների, որոնք ազատվում էին մաքսային հարկերից կամ որոնց արտահանութիւնն ու ներմուծութիւնն ընդհանրապես արգելվում էր և այլն: «Պարզա Գրուզիին» 1921 թ. հոկտեմբերի 28-ին մաքսային այս խորհրդակցութիւն մասին գրել է. «Միասնական մաքսային քաղաքականութիւն— սա էր անդրկովկասյան սովետական հանրապետութիւնների լուզումը և այդ սխտեմի ճիշտ ձևավորման, նրա բազմակողմանի պարզաբանման, և այդ քաղաքականութիւն մարտչկոման համար էլ հրապարակել է ներկա մաքսային խորհրդակցութիւնը: Խորհրդակցութեան արմատական հարցը՝ մաքսային հարկերի հարցն է: Դա պարզորոշ երևում է նաև խորհրդակցութեան օրակարգից: Ահա այն. «1. Մաքսատների կողմից արտահանվող և ներմուծվող ապրանքների ընդունման, պահպանման և բաց թողնելու կարգը:

¹⁰ ՄԻԻ ՀՄԱ, ֆ. 1, ց. 1, գ. 68, փ. 3, թ. 19:

¹¹ շՍՍՀ ՀՀՍԵ ՊԿԱ ֆ. 4/114, ց. 2, գ. 121, թ. 89:

¹² Տե՛ս ՄԻԻ ՎՄԱ, ֆ. 8, ց. 3, գ. 336, թ. 95:

2. Սահմանագծի վրա մաքսատների կազմակերպման հարցը:
3. Մաքսատների գործունեության վրա միացյալ արտառևտրի կողմից վերահսկողություն սահմանելու հարցը:
4. Մաքսային հարկերի սահմանումը և նրանց չափերը:
5. Պարզել այն ապրանքների չափը, որոնց վրա մաքսային հարկեր չպետք է սահմանվեն, կամ որոնց արտահանությունն ու ներմուծումն արգելվում է ընդհանրապես:
6. Ինչպիսի՞ կազմակերպություններն ու հաստատություններն են ընդհանրապես ազատվում մաքսային հարկեր վճարելուց:
7. Տրանզիտային բեռներից կատարված գանձումների բաժանումը հանրապետությունների միջև¹³:

Քե այդ խորհրդակցությունը ինչ որոշումներ է ընդունել քննարկված հարցերի կապակցությամբ, մեզ հայտնի չէ, քանի որ այդ մասին տեղեկություններ չկալողացանք քաղել ոչ մամուլից և ոչ էլ արխիվներից: Բայց հայտնի է, որ օրակարգի քննարկման ժամանակ կոլոմիցյան առաջարկի էր նախ և առաջ քննության առնել մաքսային կանոնադրության մշակման հարցը և նոր անցնել մյուս հարցերին, ինչպես նաև լրացուցիչ լսել պետական սահմանի պաշտպանության հարցը:

Սյնևով Միացյալ արտառևտրի գործունեության հետագա բարելավման, ինչպես նաև այդ օրգանի և առանձին հանրապետությունների հարաբերությունների կոնկրետացման անհրաժեշտությունից, 1921 թ. նոյեմբերին երեք հանրապետությունների կառավարությունների ներկայացուցիչների Քիֆլիսում գումարված կոնֆերանսը որոշեց փոփոխություններ մտցնել Հունիսի 2-ին կնքված պայմանագրի մեջ և այդ մասին առանձին ղեկրետ ընդունեց: Դեկրետը, որի տակ ստորագրել էին Ց. Մախարաձեն, Ն. Նարմանովը և Ա. Մյասնիկյանը, բաղկացած էր ութ կետից: Նրանում ասված է, որ «Միացյալ արտառևտրին է վերապահվում արտասահմանյան շուկայում պայմանավորվող հանրապետությունների արտահանության ֆոնդը կազմող բոլոր ապրանքների վաճառքի և այդ հանրապետությունների՝ առանց բացառության բոլոր հիմնարկների և հաստատությունների համար ապրանքների գնման բացառիկ իրավունքը: Ըստ որում, արտաքին շուկայում առանձին հանրապետությունների համար գնումները պետք է համապատասխանեն առանձին հանրապետությունների ներկայացրած վալյուտայի և արտահանության ռեսուրսների գումարին»¹⁴:

Ինչպես տեսնում ենք, այս կետում նորն այն է, որ հանրապետությունների համար կատարվող գնումները պետք է համապատասխանեն նրանց վալյուտային պաշարներին, մինչդեռ Հունիսի 2-ի համաձայնագրով գնված ապրանքների բաշխումը կատարվում է ըստ հանրապետությունների ներկայացրած պահանջների ու ձեռնարկությունների հարվածայնության աստիճանի: Նման փոփոխությունն արդյունք էր այն դժգոհության, որ դրսևորվել էր հատկապես Ադրբեջանում և մասամբ վրաստանում՝ բաշխման նախկին սկզբունքի դեմ: Այնուհետև, ղեկրետը Միացյալ արտառևտրին էր վերապահում հանրապետությունների արտահանության և ներմուծման պայանների մշակման, մաքսային քաղաքականության, կոնցեսիաների մասին արտասահմանյան ֆիրմաների և առանձին անձանց հետ բանակցությունները վարելու ընդհանուր ղեկավարության իրավունքը: Իսկ եթե պայմանավորվող հանրապետությունները ցանկանային օտար պետությունների հետ առևտրական պայմանագրեր կնքել, կամ էլ կոնցեսիաներ տալ, ապա դրա համար պետք է ստանային Միացյալ արտառևտրի նախնական համաձայնությունը: Դեկրետում կետեր կային նաև կազմակերպական սմետայի, ղեկավար մարմնի (կոլեգիա) կազմավորման, Միացյալ արտառևտրի և բանվորագլուղացիական տեսչության և առանձին ժողովմատների միջև հարաբերությունների հարցի մասին և այլն:

Բոլոր այս ձեռնարկված միջոցառումները չէին կարող իրենց դրական ազդեցությունը չունենալ Միացյալ արտառևտրի գործունեության վրա, և 1921 թ. աշնան ընթացքում արտաքին առևտուրը գնալով ավելի ու ավելի լայն չափեր ընդունեց, իսկ Միացյալ արտառևտրի տեսակարար կշիռն էլ ընդհանուր առևտրի մեջ անշեղորհն աճեց: Այսպես, եթե 1921 թ. ապրիլին Անդրկովկասյան հանրապետությունների ընդհանուր ներմուծումը կազմել է 30 հազ. փութ, ապա դեկտեմբերին՝ 1,7 մլն փութ: Ընդհանուր առմամբ ապրիլից մինչև դեկտեմբեր ընկած ժամանակահատվածում ներմուծվել է ավելի քան 4,5 մլն փութ (33 մլն ու սովով) ապրանք, որի 66% -ը բաժին էր ընկնում Միացյալ արտառևտրին: Այդ նույն ժամանակ արտահանությունը կազմել էր 3,2 մլն փութ ապրանք (6,5 մլն ռուբլի սովով), որի մեջ Միացյալ արտառևտրի բա-

¹³ Նույն տեղում, ֆ. 8, ց. 3, գ. 336, ք. 95:

¹⁴ ՄԻԻ ՀՄԱ, ֆ. 4033, ց. 2, գ. 1260, փ. 12, ք. 1:

ժինը կազմել էր 2,2 մլն փուֆ (1,6 մլն ո. ոսկով)¹⁵։ Մնացածը բաժին էր ընկնում հանրապետությունների կոոպերատիվ և այլ կազմակերպություններին։ Մասնավորապես պարսկական շուկայում լայն գործունեություն էին ծավալել Հայկոոպը, Ցեկավչիբրին և Ագրաբկոոպը, որոնք իրենց գրասենյակներն ունեին Քավրիզում և հաճախ գործում էին ինքնուրույն, առանց իրենց գործունեությունը Միացյալ արտառևտրի հետ համաձայնեցնելու (երբեմն առանց նրա գիտության), որն անցանկալի հետևանքներ էր ունենում։ Նման վիճակն անթույլատրելի էր հատկապես Անդրֆեդերացիայի ստեղծումից հետո (1922 թ. մարտի 12), երբ Միացյալ առևտուրը վերակազմվել էր Անդրարտառևտրի և ստեղծվել էր համապատասխան ժողկոմատ։

Այդ հարցն առանձին քննության առարկա դարձավ 1922 թ. ապրիլի 13-ին Քավրիզում գումարված հատուկ խորհրդակցությունում, որին մասնակցում էին Անդրֆեդերացիայի արտաքին առևտրի ժողովրդական կոմիսարի...¹⁶ Կատասխանատու աշխատակիցներ, հանրապետությունների կոոպերատիվ կազմակերպությունների և հյուպատոսությունների ներկայացուցիչներ, խորհրդակցությանը նախագահում էր Անդրֆեդերացիայի արտաքին առևտրի ժողկոմատի ներկայացուցիչ Վանցյանը։ Սովետական Հայաստանի կողմից խորհրդակցությանը մասնակցում էին Հայկոոպի Քավրիզի գրասենյակի կատավարիչ Օհանյանը և այնտեղ շՄՍՀ գլխավոր հյուպատոս Ծրզնկյանը։ Օրակարգում գրված էին Անդրկովկասյան ֆեդերացիայի արտաքին առևտրի ժողկոմատի և կոոպերատիվ կազմակերպությունների փոխհարաբերությունների, ապրանքների արտահանության և ներմուծման համար կոմիսիոն գործողությունների, Ջուլֆայում պահեստների կազմակերպման, մաքսային և այլ հարցեր։

Անդրֆեդերացիայի ստեղծումով արտաքին առևտուրը կազմակերպական ավելի կայուն ձևով էր պետք է ստանար և պետք է վերացվեր աշխատանքների մեջ ամեն զուգահեռություն, մասնավաճ որ հիմա արդեն հանրապետությունների վալյուտային ամբողջ ֆոնդերն անխուսափելիորեն կենտրոնանում էին մեկ օրգանի՝ Անդրարտառևտրի ձեռքում։ Իսկ դա նշանակում էր, որ արտաքին շուկայում բոլոր կարգի գործողությունները միմիայն Անդրֆեդերացիայի միջոցով կարող էին կատարվել։ Այդ ուղղությամբ առաջին փորձը կատարվել էր Կոնստանդնուպոլսում, որտեղ վերացվել էին անդրկովկասյան կոոպերատիվ կազմակերպությունների բոլոր գրասենյակները և թողնվել էր միայն Անդրարտառևտրի գրասենյակը, որին կից առաջինները կարող էին ունենալ իրենց լիազոր ներկայացուցիչները, որոնք իրենց առևտրական գործողությունները կարող էին իրագործել միայն Անդրարտառևտրի գրասենյակի միջոցով։

Մենելով Կոնստանդնուպոլսում գործի այդպիսի կազմակերպման գրական փորձից, որովհեջ նույնն անել նաև Պարսկաստանում և Քավրիզում՝ թողնելով միայն մեկ գրասենյակ, Այդ մասին ընդունված բանաձևում ասված է, որ «այսուհետև ոչ մի առանձին գրասենյակ չպետք է գոյություն ունենա։ Անհրաժեշտ է ընդհանուր կազմակերպություն՝ Անդրարտառևտրի գրասենյակը, որը փաստորեն իրագործում է բոլոր գործողությունները Հյուսիս-արևմտյան Պարսկաստանում։ Կոոպերատիվ կազմակերպությունները գրասենյակներին կից ունենում են իրենց ներկայացուցիչները, որոնք մասնակցում են այն գործողություններին, ինչ կատարվում է նրանց համար»¹⁶։

Արտահանվող և ներմուծվող ապրանքների հարցի քննարկման ժամանակ խորհրդակցությունը հատկապես կանգ պահեց առավ պարսկական շուկա արտահանվող հիմնական ապրանքների կերտիսին և շաքարի վրա և որոշեց այդ ապրանքների վրա մենաշնորհ իրավունք սահմանել։ ԵՇաքարի և կերտիսինի գների կարգավորման, — ասված է ընդունված որոշման մեջ, — ինչպես նաև Հյուսիս-արևմտյան Պարսկաստանի շուկայի նվաճման համար, Անդրարտառևտրին մենաշնորհ իրավունք է վերապահվում այդ ապրանքների վրա՝ բացառապես իր կազմակերպությունների միջոցով արտահանելու և իրացնելու իմաստով»¹⁷։ Իհարկե, դա ամենևին էլ չէր նշանակում, թե խոշոր կոոպերատիվ կազմակերպություններն ամբողջովին զրկվում էին վերահիշյալ ապրանքներն արտահանելու իրավունքից։ Գա նշանակում էր, որ այդ ապրանքների արտահանումը կարող էր տեղի ունենալ միայն Անդրարտառևտրի նախնական համաձայնությամբ։ Արտահանվող մյուս ապրանքների վրա Անդրարտառևտուրը արգելքներ և սահմանափակումներ չպետք է ուներ, բայց այս ամենը պետք է կատարվեր նրա գրասենյակի միջոցով։

Ինչ վերաբերում է ներմուծվող ապրանքներին, ապա այստեղ թեև Անդրարտառևտրի համար մենաշնորհային էին համարվում միայն հացը և միսը, բայց այն միաժամանակ իրավունք էր ստանում ուզած պահին կասեցնելու այս կամ այն ապրանքի առաքումը։ Այդ մասին ընդունված որոշման մեջ ասված է.

¹⁵ С. Хармандарян, Ленин и становление закавказской федерации, Ер., 1969, с. 157.

¹⁶ ՄԻԻ ՀՄԱ, ֆ. 18, ց. 1, ք. 315, փ. 12, թ. 14։

¹⁷ Նույն տեղում, թ. 6։

1. Բացի Հացից և մսից, մյուս ապրանքների գծով կոոպերատիվ կազմակերպությունների թույլատրվում է զբաղվել կոմիսիոն գործողություններով, պայմանով սակայն, որ դրանք իրագործվեն միմիայն Անդրարտառևտրի միջոցով:

2. Անհրաժեշտության դեպքում Անդրարտառևտուրը իրավունք ունի կանգնեցնել ցանկացած ապրանքի առաքումը:

3. Կոոպերատիվ կազմակերպությունները կարող են զբաղվել կոմիսիոն գործողություններով միմիայն իրենց տերիտորիաների շրջանակներում՝ Հանկոոպը Հայաստանում, Յեկավշիբին՝ Վրաստանում, Ազրբեյդժանում՝ Ադրբեյջանում: Ընդ որում, դա չի բացառում իրենց՝ կոոպերատիվների միջև պայմանագրային հարաբերությունների հաստատումը:

4. Բոլոր կոմիսիոն պայմանագրերը ներկայացվում են Անդրարտառևտրի հաստատմանը...»¹⁸, Խորհրդակցությունը միաժամանակ որոշեց «հաշող, օգտավետ և նպատակասլաց» առևտրական գործարքներ կնքելու նպատակով Թավրիզում թողնել միայն տեխնիկական ապրանք, իսկ ապրանքները նախապես շմտցնել Պարսկաստան, այլ պահեստավորել Ջուլֆայում և համապատասխան պայմանագրերի կնքումից հետո միայն տանել այնտեղ: Խորհրդակցությունն ընդունեց նաև մի քանի այլ որոշումներ և դրանով ավարտեց իր աշխատանքները:

Սբն փորձենք զնահատել այս խորհրդակցության կատարած աշխատանքը, ապա պետք է արձանագրենք, որ նրա ընդունած որոշումները ոչ միայն հստակություն մտցրին Անդրարտառևտրի և հանրապետական կոոպերատիվ կազմակերպությունների փոխհարաբերությունների մեջ, այլև շարունակեցին և ավարտին հասցրին այն պրոցեսը, որն սկսվել էր դեռևս 1921 թ. գարնանը և որի նպատակն էր միավորել երեք եզրայրական հանրապետությունների արտաքին առևտուրը և ապահովել նրանց միասնությունն արտաքին շուկայում:

Э. А. ЗОГРАБЯН—Из истории объединения внешней торговли Закавказских республик (апрель 1921—март 1922).—Статья посвящена истории объединения внешней торговли Закавказских республик. В ней показана та огромная работа, которую по указанию В. И. Ленина проделали большевики Закавказья по экономическому и политическому объединению Грузии, Армении и Азербайджана. Объединение внешней торговли этих республик рассматривается как один из первых шагов в этом направлении.

¹⁸ Նույն տեղում, թ. 7: